



ԵՐԱՒԵՏԱՔԹԻ, 18 ՀՈՒՏԵՄԲԵՐ, 2010

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈՐՔ

(միասնաբար արտասանուած)

Իմասպուրօրին Հօր Յիսուս, Կուր ինձ իմասպուրօրին վբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալսս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 119

ԱՍՏՈՒԾՈՅ ՕՐԷՆՔԻՆ ՊԱՐԳԵՒԱԾ ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆԸ

Շնորիք ըրէ ինձի՝ *բու ծառայիդ, որպէսզի ապրիմ եւ խօսեմքդ գործադրեմ: Բա՛ց աչքերս, որպէսզի տեսնեմ Օրէնքիդ հրաշալիքները: Ես պանդուխտ եմ երկրի վրայ, պատուէրներդ մի՛ ծածկեր ինձմէ: Սիրտս կ'այրի՝ տելարար օրէնքներուդ ըղձալով: Դուն կը սաստես անհծեալ ամբարտաւանները, որոնք շեղած են պատուէրներէդ: Ինձմէ հեռո՛ւ պահէ անոնց նախատիւնն ու արհամարհանքը, որովհետեւ ես պատուիրաններդ կը գործադրեմ: Թէպէտ իշխողները ինձի դէմ դաւ կը նիւթեն ու կը չարախօսեն, բայց ես՝ *բու ծառայ՝ կանոններուդ մասին կը խորհիմ: Արդարեւ պատուիրաններդ են իմ բերկրանքս, անոնք են իմ խորհրդականներս: Փառք, պատիւ եւ երկրպագութիւն բեզի, յաւիտեանէ մինչեւ յաւիտեանս: Ամէն:**

ՇԱՐԱԿԱՆ- ԱՂՈՐՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենատուրբ Երրորդութիւն, տուր աշխաՀիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէլոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղէլոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,
Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:



ՕՐՈՒՄՆ ՆԻԻԹ

ԱԲԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ

Գլխ. 1

Ազգաբանություն ըսելով կը հասկնանք Յիսուս Քրիստոսի մասին գիրք, պարամություն:

Աւերարանիչը Քրիստոսը կը կապէ Դաւիթի սերունդին եւ Աբրահամի սերունդին:

Դաւիթի սերունդէն կը նշանակէ թագաւորական ընտանիք, ինչ որ նաեւ կապուած է Աստուծոյ փրկած խոստումին. «Քու գաւակներուդ ընդմէջէն պիտի փրկուի քեզի թագաւորութիւն մը, որ յաւիտենական թագաւորութիւն պիտի ըլլայ»: Նոյնպէս ալ Աբրահամի սերունդ ըլլալու պարագային, դարձեալ Աստուծոյ փրկած խոստումը այս անգամ Իսահակի ճամբով, որով բոլոր ազգերը պիտի օրհնուին:

Իսկ գալով անունին: Յիսուս Քրիստոս: Անուն եւ փիլոզոս: Յիսուս Եբրայերէն ձեւով Եհոշուայ կը նշանակէ «Տէրը կը փրկէ»: Իսկ Քրիստոս փիլոզոսը կը նշանակէ օժեպ: Աւերարանիչը առաջին իսկ առիթով կը հասարարէ այն իրողութիւնը թէ այս պարամութիւնը կը վերաբերի օժեպի մը որ թէ՛ թագաւոր է եւ թէ՛ կը փրկէ:

Սերնդաբանութեան ցանկի նպարակը: Ռեւէ սերնդաբանական ցանկը ցոյց կու տայ պարամութեան մը շարունակականութիւնը: Այս պարագային որոշ սերունդներու շարունակականութիւնը: Սերունդներ, որոնք պահեցին իրենց հաւարարմութիւնը Աստուծոյ հետ: Միւս կողմէ, այս ցանկը նաեւ ցոյց կու տայ օրինական հասկացողութիւնը Աբրահամէն սկսեալ մինչեւ Յովսէփ: Ի վերջոյ, նոյն այս ցանկին մէջ կան անուններ, որոնք հրեաներ չեն, ինչպէս նաեւ չորս կիներու ներկայութիւնը. օրինակ, Ռախաբ, Հռութ: Ասով ցոյց տալու համար, որ միայն մէկ ազգի փրկիչը չէ Քրիստոս: Միւս երկուքի պարագային. մէկը Սողոմոն թագաւորի մայրը՝ Բերսաբէն, իսկ միւսը՝ Յուդայի կինը՝ Թամարը: Ասոնց պարագային կիներու ներկայութիւնը, ոչ միայն կիներ, այլ նաեւ որոշ խոցելի կողմեր ունեցող կիներ: Ասով ցոյց տալու համար, թէ Աստուծոյ փրկութեան ծրագիրը բոլորին համար պարարատուած է: Մանաւանդ, այն իրողութիւնը, երբ Աւերարանիչը հրեաներուն կը գրէ, այս սերնդաբանութեան ցանկով իսկ ցոյց կու տայ, թէ անոնք որոնք կը կարծէին թէ արդէն իրենք ժառանգորդներն են, իսկ միւսները դուրս պիտի մնան, ընդհակառակը անոնք եւս փեղ ունին, մանաւանդ երբ խոստովանութեամբ եւ ապաշխարութեամբ ընդառաջ կ'երթանք այդ հրաւերին:

Հեղաբրբրականօրէն այս ցանկին մէջ կը հանդիպինք 42 անուններու, որոնք բաժնուած են երեք մասերու, 14 անուններով:

Աբրահամէն մինչեւ Դաւիթ:

Դաւիթէն մինչեւ Բաբելոնի գերություն:

Բաբելոնի գերութենէն մինչեւ Քրիստոս:

Երեք շրջաններ խորհրդանշող:

1. Աստուածապարական շրջան: Աստուած ինք կը ղեկավարէ իր ժողովուրդը մարգարէի մը առաջնորդութեամբ:
2. Միապետական շրջան: Թագաւորները իրենք որպէս միապետեր կը ղեկավարեն հրեայ ժողովուրդը:
3. Նուիրապետական կամ Քահանայապետական շրջան: Քահանայապետի կամ քահանաներու կողմէ ղեկավարուած:

Այս այս շրջանները նկարի առած, Աւերարանիչը կ'ուզէ ասով ցոյց տայ, թէ գալիք Մեսիան, որուն պարամութիւնն է որ պիտի ներկայացուի պիտի ըլլայ թէ՛ մարգարէ, թէ՛ թագաւոր եւ թէ՛ քահանայապետ:

Ի վերջոյ, Աւերարանիչը Քրիստոսը ծնունդը կը ներկայացնէ որպէս բացառիկ մէկ երեւոյթ, ոչ թէ մարդկային կամքով, այլ Աստուծմէ, Ս. Հոգիով:

Նշանփութը Եբրայական հասկացողութեան մէջ ձեւով մը ամուսնութիւն է բացի մարմնաւոր կապէ, պարգապէս նոյն յարկի փակ ապրիլ:

Քրիստոսի փրկագործական ծրագիրն է իր ժողովուրդը փրկել: Այնպէս ինչպէս որ է պարագան Աստուծոյ ժողովուրդ բացարթութեան: Իր սեփականութիւնն են, իրեն կը պարկանին:

ԱՂՈՐԹ

Գիշեր ու ցերեկ եւ ամէն ժամ կ'աղաչենք քեզի եւ կը խնդրենք, մարդասէր Տէր: Լսէ՛ մեզ, ականջդ մեզի խոնարհեցուր, որպէսզի գուր փեղ չյոգնինք. այլ՝ մեր ճիգը արդարութեան գործ եւ աստուածաշարժութեան պարուղ նկարէ: Ընդունէ՛ մեր աղօթքն ու երկրպագութիւնը, ո՛վ Տէր, եւ քու ողորմութեամբդ հարուցանէ մեզի, առաքապէս: Քու ամենագոր աջիդ հովանիին փակ ծածկէ մեզ, եւ Սուրբ Հոգիիդ գորութեամբդ գորացուր մեզ, ո՛վ Տէր: Աջքի բիբի պէս պահէ մեզ, եւ քու բարութիւնդ ցոյց տուր մեզի, որպէսզի քու սուրբ անունդ գովուի եւ փառաբանուի: Որովհետեւ բոլոր արարածները մշտնջենաւոր փառաբանութեամբ քու փառքդ կը հիւսեն բարձունքներուն մէջ, Հայր, Որդի եւ Սուրբ Հոգի, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն: